

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

**ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.**  
**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է համայնքի ղեկավար Ռազմիկ Վարդանյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 27.12.2016թ. թիվ 38-Ն որոշմամբ

2016թ., գ. Արփի

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը .....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ .....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....	11
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	12
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում .....	12
4. ՀԶԾ ֆինանսավորում .....	18
5. ՀԶԾ մոնիթորինգ .....	19

## 1. Համայնքի ղեկավարի ողջունի խոսքը

Արփի համայնքը ունի 1214 բնակիչ, որից չափահաս բնակչություն՝ 928, պետական աշխատանքով զբաղվածներ՝ 86, անհատ ձեռնարկատիրությամբ զբաղվողներ՝ 12 մարդ :

2015 թվականից համայնքում գործում է մեկ գյուղատնտեսական կոոպերատիվ:

Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Համայնքն ունի բազմաթիվ խնդիրներ:

Դրանցից առաջնային են համայնքի ողջ բնակչությանը շուրջօրյա և որակյալ խմելու ջուր մատակարարելը, ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը և հիմնանորոգումը, մշակույթի տան, մարզադահլիճի կառուցումը, կոյուղու գործող ցանցի հիմնանորոգումը և նոր կոյուղագծի կառուցումը, երիտասարդական կենտրոնի ստեղծումը և այլն:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում և 300 գծամետր արտաքին ցանցի կառուցում
- Փողոցների ամբողջական լուսավորության ապահովում և լուսավորման խնայողական համակարգի ներդրում
- Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Ջրով վանք և «երթիջ» հին գյուղատեղի տանող ճանապարհների բարեկարգում
- Գործող կոյուղագծի հիմնանորոգում, Գետափաթաղ կոչվող թաղամասում նոր կոյուղագծի և դիտահորի կառուցում
- Ջրոսաշրջության զարգացում (ագրո և էկո տուրիզմ)
- Համայնքում երիտասարդական կենտրոնի ստեղծում

- Փոքր և միջին բիզնեսի զարգացմամբ աշխատատեղերի ստեղծում (գյուղատնտեսության ոլորտ)
- Մշակույթի տան կառուցում
- Մարզադահլիճի կառուցում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավել նոր ծրագրեր: Այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է փոքր ծրագրեր ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «ԱՐԴԻ» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև համագործակցում է «Անասնապահության զարգացումը հարավային Կովկասում» ՀԿ-ի հետ, «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի և «Հեյֆեր» միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ՝ զարգացնելով գյուղատնտեսությունը համայնքում:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արփիի համայնքը հիմնադրվել է 1965 թվականին Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղի տարհանման բազայի վրա: Գյուղը գտնվում է Արփա գետի հովտում, մարզկենտրոնից 8 կմ արևմուտք: Գյուղի բարձրությունը ծովի մակարդակից 1100մ է: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ շոգ: Տեղումների քանակը տարեկան 250-300մմ է: Համայնքը զագաֆիկացված է, ունի մեկ միջնակարգ դպրոց, մեկ մանկապարտեզ, քվարցիտների քանքավայր, շուկա, հյուրանոց, հյուրատուն, գործում է ԱԳԼՃԿ: Համայնքի տարածքում է գտնվում էրթիջ գյուղի ավերակները, Ջրով վանք կոչվող սրբատեղին, Հայրենական մեծ պատերազմի հերոս Վահիկ Լևոնյանի հուշարձան – կոթողը, Եղեռնի զոհերի, Հայրենական մեծ պատերազմում զոհված գնիշիկցիների և արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակին կառուցված խաչքարերը, 17-18-րդ դարերում քանդակված խոյերի արձանները:

Համայնքի տարածքով է հոսում Արփա գետը, որը հայտնի է բեղյու և կողակ ձկնատեսակներով:

Արփի համայնքով է անցնում Երևան – Մեղրի ավտոմայրուղին:

Համայնքում ապրում է 1214 մարդ, որից՝

Կին՝ 618

Տղամարդ`596

Երեխա/0-6տ/`93

Դպրոցականներ/6-17տ/`150

Բնակիչներ 18-62տ`784

Թոշակառուներ`136

Հաշմանդամ`34

Աշխատունակներ`812

Համայնքը ունի 294 ծուխ,որից 25-ը ընդգրկված է փարոս համակարգում:


### Բնակչության բնական աճը(2013-2015թթ.)

	2013	2014	2015
Ծնունդ	24	20	25
Մահ	10	9	11
Աճ	14	11	14

Համայնքի վարչական տարածքը 1358.63 հա է,այդ թվում` գյուղատնտեսական նշանակության հողեր`1202.96 հա:

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.:



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 30095,5 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 21%:

Համայնքում գործում են 12 անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են մանրածախ առևտրով

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում և Երևանում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

Այժմ համայնքում գործում է մեկ հյուրանոց և մեկ հյուրատուն, անհրաժեշտ է ավելացնել հյուրատների ցանցը, զարգացնել ագրոտուրիզմը, որի համար կան բավարար ռեսուրսներ:

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ: Նախատեսվում է շարունակել համագործակցությունը լ«Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության հետ «Անասնապահության զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում, ԱՐԴԻ ծրագրով զարկ տալ նոր այգիների հիմնմանը:


Համայնքը համագործակցում է նաև Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կետրոն» ԲՀ-ի հետ, նպատակ ունենալով համայնքի անապահով և բնակարանի կարիք ունեցող ընտանիքներին օգնելու և աջակցելու բնակարանների կառուցումը ավարտին հասցնելու հարցում:

Աշխատանքներ է տարվում դոնոր կազմակերպություններ, ինչպես նաև անհատ ներդրողներն գտնելու և համայնքին հուզող հիմնախնդիրներ լուծելու ուղղությամբ:

## 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:


Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 6341.1 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 6365.0 հազար դրամ:



**Արփի համայնքի 2013-2015թթ. եկամուտների և  
ծախսերի դինամիկան (հազար դրամ)**



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 31028.2 հազար դրամ, 15.12.2016թ. դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են 28860.0 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 30095.5 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը՝ ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

## 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Արվի համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքում չկան մշակութային օջախներ, մարզադահլիճ, թեև համայնքը հայտնի մարզական բարի ավանդույթներով, երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, որոնց բացակայությունը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքը առաջիկա 5 տարիներից նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Զբոսայգու հիմնում և խաղահրապարակի կառուցում
- Մարզադահլիճի կառուցում
- Զբոսաշրջության զարգացում (ագրո և էկո տուրիզմ)
- Համայնքում երիտասարդական կենտրոնի կառուցում
- Փոքր և միջին բիզնեսի զարգացմամբ աշխատատեղերի ստեղծում (գյուղատնտեսության ոլորտ)

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և միջազգային կառույցների աջակցությունը:

## 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՅՀՍ) վերլուծություն

### Ուժեղ կողմեր

1. Չքուսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ
2. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ (96)
3. Համայնքում գործող փոքր բիզնեսներ
4. Համայնքի զարգացման հիմնական
5. Հեռահեռաձայնի և բնակչության մեծ մասի առկայությունը

### Թույլ կողմեր

1. Համայնքի բնակչության մեծ մասի կենտրոնացումը համայնքի կենտրոնում
2. Չքուսաշրջության խեղդում
3. Աշակույթի անբացակայություն
4. Գյուղատնտեսական պատկան
5. Բնակավայրի ցածր կառուցման արագացում

### SWOT վերլուծություն

#### Հնարավորություններ

1. Համայնք զքուսաշրջիկների այցելություն
2. Համայնքի զարգացմանը միտված ծրագրերի շարունակական բնույթ և աճ
3. Համագործակցության շրջանակների բնդանում

#### Սպառնալիքներ

1. Բնակչության կենտրոնացումը համայնքի կենտրոնում
2. Գյուղատնտեսական պատկան
3. Բնակավայրի ցածր կառուցման արագացում

### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

#### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է՝ ունենալ զարգացած և բարեկարգ համայնք, առանց սոցիալական խնդիրների և անապահով ընտանիքների (զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով զարգացող համայնք): Համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղվածություն, կդադարի միգրացիան, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

#### 3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Արփի համայնքում զբոսայգու հիմնում և խաղահրապարակի կառուցում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի ուժմանն է միտված ծրագիրը	<b>Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը</b>						
Ծրագրի անմիջական պատակ	<b>Երեխաների և երիտասարդների ազատ ժամանցի կազմակերպում</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	<b>Թիրախային արժեքներ</b>				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	<b>1. Արփի գյուղում խաղահրապարակի կառուցում</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	<b>Թիրախային արժեքներ</b>				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	<b>Թիրախային արժեքներ</b>				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	<b>Թիրախային արժեքներ</b>				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<b>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</b>						
	1.1. 1.2.						
Ծրագրի բյուջեն	<b>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</b>						
	2.1. 2.2.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արփի համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Արփի համայնքի երիտասարդներ և երեխաներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017 և 2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է մեկ խաղահրապարակի կառուցում համայնքը դարձնելով հանգստի, ազատ ժամանցի, երիտասարդական միջոցառումների, առողջ ապրելակերպի և ֆիզիկական կուլտուրայի խրախուսման վայր:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Արփի համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում»

(Ծրագրի անվանում)

արտադիր խնդիր, որի լծմանն է միտված ծրագիրը	Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն						
Ծրագրի անմիջական պատակ	Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	100	100	100	100	100
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	100	100	100	100	100
	2. Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Հիմն. բավարարված		Հիմն. բավ	բավ	բավ	բավ	բավ	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. Մանկապարտեզի շենքի նորոգման նախագծանախահաշվային փատաթղթերի կազմում						
	1.2. Շինարարական աշխատանքների իրականացում						
	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ							
2.2.							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 8.2մլն Ընդհանուր բյուջեն՝ 8.2մլն						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արփի համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	2-6 տարեկան երեխաներ և նրանց ծնողներ:						

Պագրի սկիզբ և ավարտ

2018թ.

Պագրի համառոտ  
խորագրություն

Ներկայումս Արփի համայնքում մանկապարեզահասակ ոչ բոլոր երեխաներն են հաճախում մանկապարտեզ և բնական աճի պայմաններում ավելանում են մանկապարտեզ չհաճախող երեխաների թիվը և կա վտանգ, որ երիտասարդ ընտանիքները կլքեն համայնքը՝ երեխաներին ավելի բարեկարգ վիճակում գտնվող մանկապարտեզներ ուղարկելու նպատակով : Նման խնդրից խուսափելու, երեխաների առողջ ու անվտանգ ուսուցանվելու իրավունքն իրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մանկապարտեզի խմբասենյակի հիմնանորոգում

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Արփի համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

արտադիր խնդիր, որի լծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում						
Ծրագրի անմիջական պատակ	Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի բարեկարգված հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	10	20	20
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բարեկարգված ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Բնակիչների բավարարվածություն հասարակական տրանսպորտի աշխատանքից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ					
		1.1.					
1.2. բարեկարգման աշխատանքներ							
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ							
2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ							
2.2.							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ դրամ Կապիտալ ծախսեր՝ 2.5 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2.5 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արփի համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Արփի համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2019թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է բարեկարգել Արփի համայնքի ներհամայնքային ճանապարհները:						



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Արփի համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի հիմնանորոգում և 300 գծամետր արտաքին ցանցի կառուցում»**

(Ծրագրի անվանում)

<p>արտադիր խնդիր, որի լծմանն է միտված ծրագիրը</p>	<p align="center">Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը խթանում</p>					
<p>Ծրագրի անմիջական պատակ</p>	<p align="center"><b>Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարումից</b></p>					
	<p align="center">Ցուցանիշներ</p>	<p align="center">Ելակետային արժեք</p>	<p align="center">Թիրախային արժեքներ</p>			
		<p align="center">2016</p>	<p align="center">2017</p>	<p align="center">2018</p>	<p align="center">2019</p>	<p align="center">2020</p>
	<p align="center">Հիմն. բավ</p>	<p align="center">Հիմն. բավ</p>	<p align="center">Հիմն. բավ</p>	<p align="center">բավ</p>	<p align="center">բավ</p>	<p align="center">բավ</p>
<p>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</p>	<p align="center"><b>1. Ջրագծի կառուցում</b></p>					
	<p align="center">Ցուցանիշներ</p>	<p align="center">Ելակետային արժեք</p>	<p align="center">Թիրախային արժեքներ</p>			
		<p align="center">2016</p>	<p align="center">2017</p>	<p align="center">2018</p>	<p align="center">2019</p>	<p align="center">2020</p>
	<p align="center">Առկա չէ</p>	<p align="center">Առկա չէ</p>	<p align="center">Առկա չէ</p>	<p align="center">Առկա է</p>	<p align="center">Առկա է</p>	<p align="center">Առկա է</p>
	<p align="center"><b>2. Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարումից</b></p>					
	<p align="center">Ցուցանիշներ</p>	<p align="center">Ելակետային արժեք</p>	<p align="center">Թիրախային արժեքներ</p>			
		<p align="center">2016</p>	<p align="center">2017</p>	<p align="center">2018</p>	<p align="center">2019</p>	<p align="center">2020</p>
	<p align="center">Հիմն. բավ</p>	<p align="center">Հիմն. բավ</p>	<p align="center">Հիմն. բավ</p>	<p align="center">բավ</p>	<p align="center">բավ</p>	<p align="center">բավ</p>
<p>Ծրագրի հիմնական գործողությունները</p>	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ                      1.1. խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքներ                      1.2. խմելու ջրագծի արտաքին ցանցի մասնակիկառուցում                       2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ                      2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ                      2.2.</p>					
<p>Ծրագրի բյուջեն</p>	<p>Ընթացիկ ծախսեր՝ 0                      Կապիտալ ծախսեր՝ 12.0 մլն դրամ                      Ընդհանուր բյուջեն՝ 1.0 մլն դրամ</p>					
<p>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</p>	<p>Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում</p>					
<p>Ծրագրի հիմնական ռիսկերը</p>	<p>Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արփի համայնքը ունի:</p>					
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Արփի համայնքի բնակիչներ</p>					
<p>Ծրագրի սկիզբ և ավարտ</p>	<p>2019թ.</p>					
<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Ծրագիրը հնարավորություն կտա խմելու ջրով ապահովել Արփի համայնքը ամբողջությամբ:</p>					

## Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Արփի համայնքում երիտասարդական կենտրոնի կառուցում»

(Ծրագրի անվանում)

արտադիր խնդիր, որի լծմանն է միտված ծրագիրը	Մշակութային կյանքի, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:					
Ծրագրի անմիջական պատակ	<b>երիտասարդների ազատ ժամանցի կազմակերպում</b>					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	<b>Թիրախային արժեքներ</b>			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	<b>1. Արփի գյուղում երիտասարդական կենտրոնի կառուցում</b>					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	<b>Թիրախային արժեքներ</b>			
		2016	2017	2018	2019	2020
	<b>2. Արփի համայնքում երիտասարդական կենտրոնի կառուցում</b>					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	<b>Թիրախային արժեքներ</b>			
2016		2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական լորձողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 1.2. Շինության հիմնանորոգում և կահավորում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 4.0 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 4.5 մլն դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Արփի համայնքը ունի:					
Ծրագրի հիմնական շահառուները	Արփի համայնքի երիտասարդներ:					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2020թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է մեկ խաղահրապարակի կառուցում համայնքը դարձնելով հանգստի, ազատ ժամանցի, երիտասարդական միջոցառումների, առողջ ապրելակերպի և ֆիզիկական կուլտուրայի խրախուսման վայր:					


#### 4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը, կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:

ՀԶԾ ֆինանսավորման ուղղությունները



- ՀՀ Պետական աջակցություն
- Համայնքի սեփական ներդրում
- Միջազգային և դոնոր կազմակերպություններ

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

## 5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր է:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: